

ճիւղը¹, այն ատեն իրը կը յանգի այն կէտին, որ այս յանձնաժողովի կողմանէ հրատարակուի այնպիսի բառարան մը, ինչպիսի է, օրինակի համար, գաղղ. Ակադեմիայի բառարանը՝ գաղղ. լեզուի համար: Այս աշխատանքն սակայն երկարագոյն ժամանակի կը կարօտի եւ է հետեւաբար անգործնական մեզի եւ մեր յաջորդ սերունդին համար: Ներկայիս կարելի է միայն հրատարակել փոքրիկ բառացանկեր գիտութեանց այլ եւ այլ ճիւղերու համար, կարեւորագոյն հարցն է սակայն բառացանկերու ճշգրիտ ու ընտրելագոյն կազմութիւնը, զոր ձեռք բերելու համար անհրաժեշտ է օգտագործել արեւմտահայ ընդարձակ գրականութիւնը, որ դարէ մը ի վեր ստեղծագործած է ընտրելագոյն հայաշունչ բառավթերք մը գիտութեանց իւրաքանչիւր ճիւղին համար: Առանց արեւմտահայ անցեալ եւ ներկայ գրականութեան մատակարարած բառավթերքին օգտագործման կը կարծենք թէ կարելի չէ որ բարեյաջող ելքի մը յանգին նոր ձեռնարկները մեր գիտական լեզուն զարգացընելու եւ հիմնաւորելու:

(Վերջ:)

Հ. Յ. ՏԱՇՄԱՆ



ԲԱՆԱՍԻՐԻ ՕՐԱԳՐԻՑ

(Շարունակութիւն եւ վերջ:)

Ե.

ԵՐԵՒԱՆԸ ՍԵՔՏՈՍԻ «ՊԵՏՐՈՒԹԵԱՆ» ՄԷՋ

Հայ պատմագիրներից Երեւանի անունն առաջին անգամ տալիս է Սեքէոսը Է. դարում: Պատմելով արաբացւոց առաջին արշաւանքներից մէկի մասին, որ տեղի է ունենում Թէոդորոս Ռչտունու ու Ներսէս Շինոզի ժամանակ, նա տալիս է արաբական զօրաշարժի ընդհանուր պատկերն այս խօսքով.

«Եկն զօրն Իսմայէլի, եւ բաժանեցան յերիս. առաջ մի յԱյրարատ, առաջ մի ի Սեպհական գնդին կողմանս եւ առաջ մի յԱղուանս»:»²

Արաբական բանակը բաժանուած է երեք զօրասիւնի. սրանցից մէկը զնուած է Այրարատ, երրորդն՝ Աղուանից աշխարհն, իսկ երկրորդն՝ «ի Սեփհական գնդին կողմանս», որն, ինչպէս տեսել ենք Վաստուրականն էր:

Այրարատ ու Աղուանից աշխարհ զնացած «առաջ»ների կամ զօրասիւնների մասին Սեքէոսը իւր ասելիքն աւարտում է հետեւեալ կարճառօտ հատուածում.

«Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչ ի կողմանս Տայոց, Վրաց եւ Աղուանից, առ զաւար եւ զգերութիւն եւ եկն էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ մարտ եղեալ կուռէին ընդ բերդին Նախճաւանի, բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա: Առին զբերդն Խրամայ եւ սատակէին զնոսա սրով եւ զկանայս եւ զմանկունս զերի վարեցին»:»¹

Ասելի երկար խօսում է Սեքէոսն այն «առաջ»ի կամ զօրասիւնի մասին, որ ուղարկուած էր «ի կողմանս Սեփհական գնդին»: Այստեղ մանրամասն պատմում է մանաւանդ Արծափի կռիւն ու առումը, որ մէջ չենք բերում՝ մեր նիւթի տեսակէտից անկարելոր լինելու պատճառով: Սակայն շատ հետաքրքրական է Սեքէոսի պատմութեան այն հատուածը, որ պատմում է զէպրեբը մինչեւ Արծափի կռիւլը:

«Արդ, որք ի կողմանս Սեփհական գնդին, արշաւեալ սիոեցան եւ հարեալ զամենայն կողմանս զայնոսիկ սրով սուսերի՝ առին զաւար եւ զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յԵՐԵՒԱՆ եւ մարտեան ընդ բերդին եւ ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու եւ ոչ նախ ինչ կարացին առնել: Գնացին անտի եւ բանակեցան յԱրծափս՝ հանդէպ բերդին առ ջրովն: Եւ սկսան պատերազմիլ ընդ բերդին»:»²

Այս հատուածում, որի վրայ մինչեւ այժմ ուշադրութիւն չեն դարձրել բանասէրները, զարմանալի է Երեւանի յիշատակութիւնը: Արաբ զօրքերը զայիս են «ի Սեփհական գնդին կողմանս», եւ այստեղ յանկարծ . . . «Ժողովեցան ի յԵրեւան եւ մարտեան ընդ բերդին . . .» Ո՞րտեղից ո՞րտեղ: Ինչ էլ որ ընդունենք կողմն Սեփհա-

¹ Որու պաշտօնական կանոնագրութիւնը տես Խորհրդային Հայաստան, 1925, Թ. 26 (= 1079):

² Սեքէոսի եպիսկոպոսի «պատմութիւն ի շէրակն» թիֆլիս, 1912, էջ 188:

¹ Սեքէոս, էջ 191:
² Սեքէոս, էջ 188—189:

կան զնդին — Մարդաստան, թէ վասպու-
րական — յամենայն դէպս ոչ առաջնում ու
ոչ էլ երկրորդում Երեւան անունով վայր
չկայ ու չի եղել: Կայ եւ եղել է Երեւան,
որ Այրարատումն է:

Ուրեմն ինչո՞վ պէտք է բացատրել
Սերէոսի այս հատուածում Երեւանի ան-
ակնկալ երևոյթը:

— Դարձեալ ձեռագրի անձատումով:
«Երեւանի» փոխարէն սկզբնաղբում եղել է
մի այլ, շատ կամ քիչ նման անուն:

Ո՞րն է այն վայրն, ուր առաջին ան-
գամ կարող են ոտք դրած լինել արարներն
«ի կողմն Սեփհական զնդին» = վասպուրական
արշաւելիս:

Սերէոսի մի այլ հատուածը, որ նկա-
րագրում է մի ջոկ արշաւանքի ժամանակ
արարական մէկ ուրիշ զորաշարժի ճանա-
պարհ, նպաստում է առեղծուածի լուծմանը:

«Եւ ճանապարհ կալեալ (Իսմայէլա-
ցոցն) ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպու
եւ ընդ Կողովիս՝ Թափեցան յԱյրարատ:»¹

Առաջին հատուածի մէջ, որտեղ յի-
շատակուած է կարծեցեալ Երեւանը, զորա-
շարժի ճանապարհն անցնում էր — Որ-
դասպու — Արծափ (վերջինս Կողովաւումն
էր) դժով: Իսկ այս երկրորդ զորաշարժի
ժամանակ՝ Բերկրոյ ձոր — Որդսպու —
Կողովիս դժով: Երկու դէպքում էլ զորա-
շարժի գիծն անցնում է հարաւից հիւսիս:
Գծի մի ծայրում, հիւսիսում Արծափն է,
Կողովիսը, միջին հանգոյցը Որդսպուն է,
իսկ հարաւային սկզբնակէտը՝ Բերկրոյ ձորը
կամ մի այլ մօտիկ վայր այս շրջանում:

Ո՞րն է այս մօտիկ վայրը:

Մեր կարծիքով՝ յայտնի Առեստը
կամ Առեստ աւանը, որ միասին Առեստաւան
էլ է գրւում:²

Այս հետեւութեան յանդերձ՝ Սե-
րէոսի խօսքը, թէ

«Եւ եկին, ժողովեցան ի յԵրեւան եւ
մարտեան ընդ բերդին», —

սրբազրում ենք:

«Եւ եկին, ժողովեցան ի յԱռեստ-
աիւն եւ մարտեան ընդ բերդին»³

¹ Սերէոս, էջ 175:
² Հմմտ. նաեւ Սերէոսի յիշած յոյն-պարսկական
սահմանը. «Ցեզը ծովուն բզնունեաց եւ ցԱռեստաւան եւ
ԾԿողովիս գաւառն» եւ այլն: Սերէոս, էջ 71:
³ Հնագրական նկատառումով կարելի որ ենք հա-

Սրանով Երեւանի առժան յիշատա-
կութեան առասպելը չքանում է, սրա հետ
միասին վերանում է Սերէոսի յիշեալ հա-
տուածի կոպիտ հակասութիւնն էլ: Եւ
որովհետեւ Սերէոսը մի ուրիշ տեղ այլ եւս
Երեւանի անունը չէ տալիս, նշանակում է
Սերէոսի «Պատմութեան» մէջ Երեւանի մա-
սին յիշատակութիւն չկայ առհասարակ:¹

Ի վերջոյ, այն հանգամանքը, որ
«ի կողմն Սեփհական զնդին» արշաւող արա-
բական զորախումբն իւր յարձակումն սկը-
սում է Առեստաւանից, որը վասպուրա-
կանի Արբերանի գաւառումն էր եւ ոչ թէ
Մարդաստանում, նորից ու նորից հաստա-
սում է նախորդ, այն է՝ Դ. գլխում մեր
ասածը, թէ «կողմն Սեփհական զնդին» եր-
բեմն գործ է ածւում ոչ միայն Մարդաս-
տանի, այլ եւ «կողմն վասպուրական
զնդին», այն է՝ վասպուրականի իմաստով:

(Վերջ:)

ԹԱԴԵՆՍ ԱՆԿԱՂԿԵԱՆ

Երևան, 22 հոկտ. 1925:



մարում յիշեցնել, որ Առեստ անունն ունի նաեւ Եաստ
ձեւը: Հմմտ. Յովհաննու կաթուղիկոսի Գրասխանակերտց-
ւոյ «Պատմութիւն Հայոց», Գուկասեան մատենագարան,
Թիֆլիս, 1912, էջ 63, որտեղ Փար Առեստի փոխարէն
գտնում ենք Փար Եաստ: Դարձեալ խորհնացու
Ա. Գրբի ժԲ. գլխում յիշատակուած նահապետներից մէկի
անունը ձեռագրերը տալիս են թէ Արատ ու թէ Երատ
ձեւերով (Հմմտ. «Պատմագիրք Հայոց ի հրատարակու-
թիւն, էջ 39): Վերջին «Երատ» ձեւից ու «անս» բա-
ռից բարդ բառ կազմելով՝ կը ստանանք Երատաիւն ըն-
թերցուածը, որ արդէն բառական մօտեցում է Երեւան
բառին:

¹ Այսպիսով եզակի հոյ պղբի բը, որ Ե. Գրբից
այն էլ գարի սկզբից պահել է Երեւանի մասին մի ու
միակ լակնական յիշատակութիւն, «Գրբը թղթոցն» է,
որտեղ հոգեւորականների շարքում հանդէս է գալիս ոմն
«Գա. իթ Երեւանայ»: Տե՛ս «Գրբը թղթոցն», Թիֆլիս,
1912, էջ 151: Ատում ենք «միակն յիշատակութիւն, որով-
հետեւ նոյն էջի կարծեցեալ երկրորդ յիշատակութիւնը —
«Ջոջիկ Երեւանից», ինչպէս պարզել է Ստ. Կանայեանցն
Ուխտանեսի վրայ հիմնելով, սխալագրութիւն է, պէտք է
լինի «Ջոջիկ Արամունից»: Հմմտ. Ստեփան Կանայեանց
«Այցայս գաւառներ Հին Հայաստանի», Ելմիածին, 1914
էջ 66, ծանօթ. 4րդ: